ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«----» հոկտեմբերի 2015թ.** **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2014 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.270-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.110՝ 90.8 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21072015-01-0045 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Զառա Արամյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.110՝ 90.8 քմ մակերեսով բնակարանն անհատույց սեփականության իրավունքով նվիրել Զառա Արամյանին։

Զառա Արամյանը ծնվել է 1970 թվականի հուլիսի 1-ին Երևանում, 1988-93 թվականներին սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը։ Սկսած 1989 թվականից նրա հոդվածները տպագրվել են «Կոսմոպոլեց», «Էպոխա», «Հայելի» պարբերականներում։ Վերջինս 1993 թվականից ղեկավարել է Հայաստանի ազգային ռադիոյի նորաստեղծ ռուսալեզու բաժինը, որտեղ վարել և խմբագրել է բազմաթիվ հասարակական, քաղաքական, մշակութային հաղորդումներ սփյուռքի համար։ Հանրությանը հայտնի «Համով զրույց» հաղորդման հեղինակն ու վարողն է։ Նկարահանվել է բազմաթիվ հայտնի ֆիլմերում և մանրապատումներում։ Զառա Արամյանը 2014 թվականին արժանացել է ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչմանը։

ՀՀ ժուռնալիսների միության անդամ է 1994 թվականից և դասավանդում է նաև Կրթության միջազգային ակադեմիայում՝ հանդիսանալով նույն ակադեմիայի ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան։

Զառա Արամյանը ապրում և ստեղծագործում է Երևանում, բնակվում է ամուսնու, երկու տարասեռ երեխաների, ամուսնու ծնողների, ամուսնու եղբոր, վերջինիս կնոջ և երկու երեխաների հետ համատեղ և հանդիսանում է բնակարանային պայմանների խիստ կարիքավոր։

Հաշվի առնելով բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտությունը, ստեղծագործելու համար պայմաններ ապահովելու նպատակով մշակվել է ավագանու սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ